

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲՅԱՆ

**ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԺԸ. 00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2022

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

ЛИЛИТ САМВЕЛОВНА БАБАЯН

**ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ И АРХИТЕКТУРНО-ПРОСТРАНСТВЕННОЙ  
ОРГАНИЗАЦИИ КЛАСТЕРНОЙ МОДЕЛИ В СООБЩЕСТВАХ СЮНИКА**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности  
18.00.01-" Архитектура "

ЕРЕВАН 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝

Ճարտ. թեկնածու, դոցենտ

**Ն. Գ. Պետրոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Ճարտ. դոկտոր, պրոֆեսոր **Դ. Գ. Քերթմենջյան**

Ճարտ. թեկն., պրոֆեսոր **Ս. Բ. Օհանյան**

Առաջատար կազմակերպություն՝

**«Ալեքսանդր Թամանյանի անվան  
Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ**

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը  
14.00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին  
կից գործող ՀՀ ԲՈԿ-ի «Ճարտարապետություն» 029 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում: Հասցեն՝  
0079, ք. Երևան Մառի փող 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ [www.nuaca.am](http://www.nuaca.am)

Սեղմագրին առաքված է 2022 թվականի նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Ճարտ. դոկտոր, պրոֆեսոր



**Լ. Վ. Կիրակոսյան**

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и  
строительства Армении

Научный руководитель:

канцлиат арх., доцент

**Н.Г. Петросян**

Официальные оппоненты:

доктор арх., профессор **Д. Г. Кертменджян**

канд. арх., профессор **С. Б. Оганян**

Ведущая организация:

**"Национальный музей-институт архитектуры имени  
Александра Таманяна" ГНКО**

Защита состоится 26 декабря 2022 года в 14.00 часов на заседании  
специализированного совета 029 - «Архитектура» ВАК РА, действующего при  
Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА).

Адрес: 0009, г. Ереван, ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г.  
Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: [www.nuaca.am](http://www.nuaca.am)  
Автореферат разослан 14-го ноября 2022г.

Ученый секретарь Специализированного совета:

доктор арх., профессор



**Լ. Վ. Կիրակոսյան**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Հեղափոխության արդիականությունը**

ՀՀ Սյունիքի մարզի ներկա փուլի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակը, չկանոնակարգված քաղաքաշինական միջամտությունները, վարչատարածքային կառուցվածքի փոփոխություններն առաջնահերթ պահանջ են առաջադրում մշակելու և իրականացնելու նոր, կայացող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն՝ վարչատարածքային միավորների խմբերի կամ դրանց առանձին հատվածների համար: Որպես ներկայացված խնդիրների լուծում են դիտարկվում տարածական պլանավորման հիմնական գործիքակազմի միջոցով գոտիների նպատակային օգտագործմանն ու կայուն զարգացմանը, բնական և պատմամշակութային ժառանգության պահպանմանը, ինչպես նաև կենսագործունեության բարենպաստ տարածական միջավայրի ձևավորմանը նպատակաուղղված այլ անհրաժեշտ գործոնների տարածքային կազմակերպման հիմնական դրույթներն ու պայմանները:

Թեև մարզում առկա են հանքահումքային հարուստ պաշարներ, Սյունիքը դեռևս մնում է Հայաստանի համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես ոչ արդյունավետ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ ունեցող տարածքներից մեկը:

Սյունիքի մարզի խնդիրների լուծման ճարտարապետատարածական հնարավոր տարբերակներից մեկը կլաստերային-ցանցային մոտեցումն է՝ կլաստերային մոդելի տեղայնացումն ու ներդրումը: Մոդելը դիտարկվում և ներկայացվում է որպես համայնքների համաչափ և արդյունավետ զարգացման հնարավոր տարբերակ՝ հաշվի առնելով բոլոր նախապայմաններն ու հիմնախնդիրները:

«Կլաստեր» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է մաթեմատիկական վերլուծությունների ժամանակ՝ հետագայում իր կիրառումը գտնելով բազմաթիվ այլ ոլորտներում:

Տարածական հատակագծային կառուցվածքում կլաստերային մոտեցումն իրենից ներկայացնում է առանձին քաղաքաշինական ցանցային տարածության ձևավորում, որն որոշակիորեն ինքնաբավ ու ինքնավար է և հնարավորություն ունի իր բնակիչներին ապահովել բոլոր անհրաժեշտ գործառույթներով (բնակություն, բիզնես, առևտուր, գվարճանք, հանգիստ և այլն): Տարածական պլանավորման մեջ կլաստերային-ցանցային մոտեցումը կառավարման նոր տեխնոլոգիա է, քանի որ իր մեջ ներառում է համայնքների հեռանկարային զարգացման երեք հիմնական թիրախները՝ կայունություն, համագործություն (համաչափություն) և հավասարակշռություն:

Կլաստերային տարածական պլանավորման մոդելի հիմքում ընկած է ներկլաստերային բաղադրիչների միջև արդյունավետ գործառնական-հատակագծային կապերի ստեղծումը և դրանց միջև ռեսուրսների համաչափ

տարաբաշխումը: Որպես համայնքների կառավարման գործիքակազմ այն բնակավայրերի և տարածքների զարգացման խթանիչ համակարգ է՝ ներկլաստերային կապերի զարգացման շրջանակում գործընթացին դինամիկա և մրցակցային փոխարդյունավետություն հաղորդող: Մոդելի հաջող գործարկման արդյունքում հետընթաց ապրող բնակավայրերում գրանցվում է իրենց զբաղեցրած երկրորդական դիրքից աստիճանական անցում դեպի ավելի բարենպաստ մակարդակ:

Սկզբում կլաստերն առաջ է մղում թիրախավորված առանձին համայնքին, իսկ հետո, ինչպես բոլոր համակարգերում, այն սկսում է դրական ուղիղ և հակադարձ դրական արձագանքներ ստանալ: Ժամանակի ընթացքում «կլաստերային» տարածաշրջանի բոլոր «դերակատարները» (բնակավայրեր, տնտեսություններ, արտադրություններ) ավելի մեծ կշիռ են ձեռք բերում նմանօրինակ այլ կառուցվածքային բաղադրիչների համեմատ, որտեղ առկա չէ այդպիսի կլաստերային մոդել:

Կլաստերային մոտեցումը՝ որպես կայուն զարգացման գործիքակազմ, ձևավորման, համակարգային կազմավորման գործընթաց է:

Կազմավորման առաջին փուլում տրվում է «կլաստերային ցանցային տարածության» և դրա բաղադրիչ տարրերի հայեցակարգային սահմանումը: Երկրորդ փուլում առաջարկվում է կլաստերային մոդելում շաղկապված բաղադրիչների զարգացմանը խթանող թիրախային ոլորտը: Երրորդ փուլում առաջարկվում է տարածաշրջանային կառավարման ձևավորված համակարգ՝ հիմնվելով կլաստերային ցանցի կառուցվածքային մոդելի վրա:

### ***Թեմայի ուսումնասիրվածությունը***

Կլաստերային մոտեցման դրույթային կետեր կարելի է ուսումնասիրել համաշխարհային տարածական պլանավորման հայեցակարգային վերլուծությունների և գիտահետազոտական գործունեության մեջ:

20-րդ դարի սկզբում անգլիացի փիլիսոփա Էբենեզեր Հովարդն իր «Ապագայի քաղաք-այգիներ» գրքում առաջ է քաշել խոշոր քաղաքների անմիջական հարևանությամբ 30 հազար բնակչությամբ համայնքների ցանցի գաղափարը: Տարածական պլանավորման հայեցակարգերի, համաչափ և համակարգային կայուն քաղաքաշինական զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ գործնական և գիտական գործունեություն են ծավալել Վ. Կրիստալլերը, Է. Հովարդը, Մ. Ռագոնը, Թ. Մորը, Լ. Կորբյուգեն, Տ. Կամպանելլան, Դ. Ֆառը, Ֆ. Օլմստեդը, Կ. Տանգեն, Ռ. Ռոջերսը, Կ. Կուռոկավան, Զ. Զեյկոբսը, Վ. Կոռնոնը, Ռ. Կոլիասը, Ռ. Պիանոն, Ն. Ֆոսթերը և մի շարք այլ հետազոտողներ: Ծավալատարածական կազմակերպման գործունեության հիմնական տեխնիկական պահանջներն ամփոփվել են նաև օրենսդրական, նորմատիվ հիմնադրույթային փաստաթղթերում:

Կլաստերային մոտեցման համանման մոդել կարելի է դիտարկել Վալտեր Կրիստալլերի «Կենտրոնական վայրերի տեսությունը» (1933 թ.): Կրիստալլերի

տեսության մեջ կենտրոնական վայրը ցանկացած մասշտաբի բնակավայրի մոդելն է, որը ծառայում է որպես կենտրոն շրջակա բնակավայրերի համար՝ ապահովելով վերջիններիս հանրային սպասարկման անհրաժեշտ բոլոր ծառայություններով: Կրիստալլերի մոդելը շեշտում է երեք հիերարխիաների փոխկապակցվածությունը՝ քաղաք, գործառույթ, ազդեցության գոտիներ: Այդ իսկ մոտեցումն ընդհանուր կետերով համապատասխանում է կլաստերային մոդելի գաղափարին՝ տարածական հատակագծային կառուցվածքային տարրերի համակարգված, փոխկապակցված զարգացում: Ընտրելով հիմնական հեռանկարային հնարավոր զարգացում ունեցող գործառույթը՝ տարածքի համակարգված ներուժն ուղղորդվում է այդ ուղղությամբ:

Ճապոնացի հայտի ճարտարապետ Կենզո Տանգեն առաջիններից էր, ով որպես իր ճարտարապետական նախագծային լուծման առանցքային մոտեցում ընտրեց կլաստերային ցանցի մեթոդը՝ 1960 թ.-ին իր Տոկիո Բեյ նախագծի շրջանակներում կիրառելով այն:

Այժմ տարածական հատակագծային պլանավորման մեջ կարելի է հանդիպել տիպարային կլաստերային մեթոդով մշակված մի շարք տեսություններ և նախագծեր (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, ԱՄՆ, Եվրոպական մի շարք երկրներ):

Հայաստանի Հանրապետությունում համայնքների տարածական պլանավորման, քաղաքաշինական համակարգի կայուն, փոխկապակցված զարգացման հիմնախնդիրներին մի շարք գիտական աշխատություններում անդրադարձել են Յու. Սաֆարյանը, Ս. Թովմասյանը, Ա.Ալոյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Առուստամյանը և այլք:

Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջաններում զարգացման անհամաչափություններն ուսումնասիրելու և մեղմելու նպատակով ևս մշակվել են մի շարք նախագծային առաջարկներ: 2003 թվականին հաստատված ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը կարելի է դիտարկել որպես համակցված կլաստերային մոդելի ձևավորմանը միտված առաջին նախագծային առաջարկներից մեկը: Տարաբնակեցման նախագծի հիմքում ընկած են մի շարք հիմնախնդիրներ, որոնք առանցքային են նաև կլաստերային մոդելի կառուցվածքի ձևավորման համար: Դրանք են՝

- տարածքների յուրացման անհամաչափությունների վերլուծությունը,
- տարածքների զարգացման հիմնական ուղղությունների կանխորոշումը,
- համայնքների սեփական ռեսուրսների հենքի վրա տնտեսության գերակա ճյուղերի զարգացման և տեղաբաշխման հնարավորությունների բացահայտումը,
- ձևավորված կենտրոնների միջև գործառնական-հատակագծային կապերի ստեղծման և ամրացման գնահատումը:

2006 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված N52 «ՀՀ համայնքների զարգացման մակարդակների և հնարավորությունների գնահատման»

հայեցակարգի համաձայն համայնքների մասին բազմակողմ տեղեկատվության առկայությունը և տնտեսության մասնագիտացման ուղղությունների ճշգրտումը զարգացման ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման անհրաժեշտ հիմքն են: Ելակետային տեղեկատվության նման շտեմարանը հնարավորություն է ընձեռում նաև կատարել միջհամայնքային համեմատություններ, համայնքները խմբավորել և դասակարգել ըստ որոշակի բնութագրիչների, ձևակերպել համայնքների տիպաբանություն:

Տարածքների համաչափ զարգացմանն անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որի 5-րդ՝ «Տարածքային համաչափ զարգացում» բաժինն ամբողջությամբ նվիրված է տարբեր տարածաշրջանների անհամաչափ զարգացվածությանը, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներին:

«Տարածքի տարածական պլանավորման համակարգի ուսումնասիրություններ իրականացվել են նաև Ա.Ա. Թովմայանի «Տարածական պլանավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» (2018 թ.) գիտական ատենախոսության մեջ, որն ուղղված էր ստեղծել կիրառական տարածական պլանավորման փաստաթուղթ, ինչը կնպաստեր երկրի տարածաշրջանների զարգացման անհամամասնությունների մեղմմանը:

Մասնավորապես Սյունիքի մարզի համայնքների համար մշակված ծրագրերի շարքում կարելի է նշել նաև «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում. Համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցություն» ուսումնասիրությունը, որի հիմքում ընկած է մարզի խոշորացման արդյունքում հետագա զարգացման հեռանկարների դիտարկումն ու գնահատումը:

2017 թվականից սկսած ՀՀ մարզերի համար մշակվում են համակցված պլանավորման նախագծեր: Համայնքների խոշորացման գործընթացով պայմանավորված՝ բնակավայրերի ծավալատարածական կառուցվածքում անհրաժեշտաբար առաջացող փոփոխությունների հետ ձևավորված քաղաքաշինական նոր մոդելներով համայնքները կարիք ունեն ճարտարապետահատակագծային կառուցվածքի զարգացման նոր ընդհանրական հայեցակարգային մոտեցման: Համակցված տարածական պլանավորման հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված պետք է լինի տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը:

Համակցված կլաստերային պլանավորման ներդրումը ենթադրում է տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպում, տարածաշրջանների և համայնքների գործառնական-հատակագծային, տնտեսական, ենթակառուցվածքային և մշակութային կապերի, ճարտարապետահատակագծային կառուցվածքի և գործառնական գոտևորման խնդիրների լուծում՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող և տարածաշրջանի ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված արդյունավետ պայմանների առաջադրմամբ և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի տեղադիրքը՝ որպես հանրապետության հարավային դարպաս, ինչպես նաև մարզի համայնքներում իրականացված խոշորացման գործընթացը, առաջարկվում է համայնքների զարգացման հիմքում դնել կլաստերային մոտեցումը, ինչը թույլ կտա ապահովել կլաստերների միջև փոխադարձ գործառնական հատակագծային կապեր և արդյունքում կնպաստի համայնքների համաչափ փոխկապակցված և կայուն զարգացմանը:

**Հեղազոտության նպատակն է** ՀՀ Սյունիքի մարզի համայնքների համակցված կլաստերային տարածական պլանավորման ծրագրերի առաջադրման և ուսումնասիրության հիման վրա մշակել մոտեցումներ, համայնքների զարգացման տարածքային անհամաչափությունների մեղմմանն ուղղված միջոցառումներ և առաջարկել համապատասխան լուծումներ տարածքների ճարտարապետահատակագծային կառուցվածքի կատարելագործման և կայուն զարգացման համար:

**Հեղազոտության հիմնական խնդիրներն են.**

- ուսումնասիրել համակցված կլաստերային մոտեցմամբ համայնքների զարգացման համաշխարհային և հայրենական փորձը,
- ընդհանրացնել և դասակարգել ուսումնասիրության արդյունքները՝ հարմարեցնելով վերջիններիս կիրառությունը ՀՀ բնակավայրերի ձևավորված համակարգին,
- մշակել համայնքների (քաղաքային և գյուղական բնակավայրերի) ճարտարապետահատակագծային կառուցվածքի արժևորման և զարգացման մեթոդաբանություն՝ հիմնվելով կլաստերային սկզբունքների վրա,
- առաջադրել քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացման և էկոլոգիական վերակառուցման ուղիներ՝ օրենսդրության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան քաղաքաշինական գործունեության իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծումով և տարածական կազմակերպման «խելացի» կառավարման

գործընթացների վերագրմամբ,

- համայնքների (բնակավայրերի) զարգացման հնարավոր ուղղությունների վերլուծության հիման վրա առաջադրել կլաստերային մոտեցման ճարտարապետահատակագծային կառուցվածքի արդյունավետ վերակազմավորման մոդել,
- մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ Սյունիքի մարզի համայնքներում կլաստերային վերակառուցման հենքի վրա կայուն զարգացում ապահովելու և դրանից բխող ճարտարապետահատակագծային խնդիրները լուծելու համար:

**Հեղազոյության առարկան** ներառում է ՀՀ Սյունիքի մարզի, դրա ճարտարապետահատակագծային կառուցվածքի առանձնահատկությունները և հնարավոր զարգացումները՝ կլաստերային տարածական պլանավորման դրույթների կիրառմամբ:

**Հեղազոյության մեթոդներն են.**

- գրական, արխիվային և վիճակագրական նյութերի ուսումնասիրություն,
- պաշտոնական փաստաթղթերի և նորմատիվ իրավական ակտերի համեմատական վերլուծություն, ընդհանրացումներ և գնահատում,
- նմանօրինակների (անալոգների) մեթոդի կիրառություն,
- կլաստերային վերլուծություն,
- գրաֆերի մեթոդի կիրառմամբ ուսումնասիրություն,
- վերլուծության արդյունքների համադրմամբ իրավիճակի համալիր գնահատում,
- գիտականորեն հիմնավորված մոդելների մշակում:

**Փիլական նորոյթը**

ՀՀ Սյունիքի մարզի բնակավայրերի համար առաջին անգամ կատարվել է.

- տարածքների ճարտարապետահատակագծային ձևավորված կառուցվածքի գնահատման մեթոդաբանության մշակում՝ տեղայնացնելով միջազգայնորեն ընդունված և լայն կիրառություն ունեցող կլաստերային համակարգերը,
- ստացված չափորոշիչների հենքի վրա մշակված մեթոդաբանության կիրառմամբ կատարվել է համայնքների համալիր ուսումնասիրություն և գնահատում, մշակվել են համապատասխան քարտեզագրական և աղյուսակային տվյալների շտեմարան,
- համայնքների քաղաքաշինական նախագծման տարբեր փուլերում կլաստերային տարածական պլանավորման հենքի վրա հեռանկարային հատակագծային զարգացման մոդելի մշակում՝ իրականացման արդյունավետ ու կայուն մեխանիզմների առաջադրմամբ:

**Աշխատանքի գործնական արժեքը.**

- ճարտարապետատարածական պլանավորման յուրաքանչյուր հիերարխիական մակարդակի համար համայնքների կառուցվածքային



կայուն զարգացման նկատմամբ միասնական համակցված սկզբունքների սահմանումը,

- համայնքների միջև համագործակցության խթանումը՝ կառուցվածքային և հատակագծային վերակազմավորումների, պատմամշակութային ժառանգության պահպանության գործընթացների իրականացում և տարածքների արդյունավետ կառավարում ապահովելու համար,
- մարզերի զարգացումն ու միջտարածաշրջանային կապերի ամրացումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար մրցունակ կլաստերների ցանցի ստեղծման միջոցով:

***Հեղափոխության արդյունքները ներդրված են.***

- ✓ ՀՀ Սյունիքի մարզի համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում մոդելի տեղայնացում և գործարկում զարգացման հայեցակարգային ծրագրերում:
- ✓ ՀՀ Տավուշի, Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերի համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում մոդելի տեղայնացում և գործարկում զարգացման հայեցակարգային ծրագրերում:
- ✓ ՀՀ համայնքների պատմական միջուկների կլաստերային վերականգնման և վերաօգտագործման հայեցակարգային նախագծերի առաջարկներում:
- ✓ Բերդ քաղաքի հանրային կլաստերի տարածական հատակագծային կառուցվածքի ձևավորման հայեցակարգի մշակման նախագծում:
- ✓ Գյումրի քաղաքի կենտրոնական միջուկի կլաստերային վերաօգտագործման և ճարտարապետահատակագծային կազմակերպման հայեցակարգային նախագծում:
- ✓ Ուսումնակրթական ծրագրերի, դասընթացների իրականացման գործընթացների շրջանակում:

***Պաշտպանության են ներկայացվում.***

- համայնքների համակարգված կլաստերային ճարտարապետատարածական պլանավորման և զարգացման ներուժի գնահատման չափորոշիչների տեղայնացման գործիքակազմը,
- կլաստերային զարգացման ներուժի գնահատման բազմազործոն մեթոդաբանությունը,
- ՀՀ Սյունիքի մարզի համայնքների կլաստերային զարգացման մոդելը՝ որպես բնակավայրերի ճարտարապետահատակագծային զարգացման կանոնակարգման հեռանկարային հայեցակարգ,
- գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ տարածական հատակագծային կլաստերային զարգացման դրույթների արդյունավետ իրականացմանն ուղղված համալիր միջոցառումների վերաբերյալ:

***Հրատարակումներ***

Ատենախոսության թեմայով հրատարակված է 13 գիտական հոդված:

***Արենախոսության կառուցվածքը և ծավալը***

Ատենախոսությունը կազմված է 143 էջ տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Այն ներառում է ներածական մաս, երեք գլուխներ, եզրակացություններ, 115 անուն օգտագործված գրականության ցանկ, ինչպես նաև 18 էջ հավելվածներ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը, խնդիրները, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորոյթը, հետազոտության գիտական և գործնական նշանակությունը: Համառոտ ներկայացվում է գիտական գրականության մեջ թեմայի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններն ու տեսական մոտեցումները:

**ԳԼՈՒԽ 1. ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

***Առաջին գլխում*** ուսումնասիրվել են կլաստերային մոդելի ձևավորման առանցքային ուղիները, կիրառման արտասահմանյան և հայաստանյան փորձն ու նախագծային օրինակները:

Մոդելի ձևավորման ժամանակագրական դասակարգման հիմքում դիտարկվել են կլաստերային տեսության զարգացման ուղիները, ժամանակի ընթացքում մոդելի համանման տեսությունների փոփոխությունները և դրանց գործնական կիրառման արդյունքները: Ուսումնասիրվել են մի շարք ծավալատարածական պլանավորման նախագծեր, գիտական աշխատություններ, որոնց հիմքում ընկած է տարածքների համաչափ, փոխկապակցված, կայուն զարգացումը:

Կլաստերային տեսությունը ուսումնասիրվել է որպես միջավայրի տարածական հատկագծային կառուցվածքի հետազոտման և համալիր գնահատման մեթոդ, որը հաճախ անվանում են տիպաբանական վերլուծություն, ավտոմատ դասակարգում:

Կլաստերային տեսությունը, որպես նորարարություն դիտարկվող և նորարարական ներուժ ունեցող ծավալատարածական մոդել, ընդգրկում է տեսության բազմաբևեռ ուղղություններ և տարածքներ: Հայեցակարգային մշտադիտարկումները, բարելավումներն ու լրացումները տարածական պլանավորման մակարդակում հնարավորություններ են ընձեռել դիտարկելու մոդելի բազմաղորտ հարմարեցումները: Համագործակցող, փոխկապակցված բաղադրիչներով կլաստերային մոտեցման նոր հնարավորություններն ու

առավելությունները ներկայացվում են որպես համայնքների մրցակցային ակտիվությունն ապահովող (համամրցակցության ու համագործակցության), արդյունքում տնտեսական աճ գրանցող գործիքակազմ:

Տնտեսության կամ համայնքների ընդհանուր զարգացման հիմքում կլաստերային մոդելի և բաղադրիչ տարրերի ներդրման հիմնական առավելությունները հետևյալն են.

- Աճ, զարգացում, արտադրողականություն և մրցունակություն: Միևնույն ոլորտում գործող տարրերի արդյունավետության կամ ձախողումների գրանցումն ու գնահատումը նպաստում են համայնքների դիտարկվող ոլորտի ընդհանուր առաջընթացին:
- Մաքշելիություն, հասանելիություն: Կլաստերի բաղադրիչների կողմից ռեսուրսների և ծառայությունների պահանջարկը խթանում է ենթակառուցվածքային ծառայությունների զարգացումը և մատչելիությունը (ռեսուրսների արագ հասանելիություն), իսկ աշխարհագրական նպաստավոր դիրքերի դիտարկումն ու բաշխվածությունը թույլ է տալիս խնայել ծախսերը:
- Նորարարություն, տնտեսական աճ: Կլաստերի այլ բաղադրիչների հետ անմիջական համագործակցությունը, պարտականությունների բաժանումը թույլ է տալիս կրճատել նորարարությունների, գնումների, արտադրության, շուկայավարման (մարքեթինգի) զարգացման և իրականացման ծախսերը:

Քաղաքներն ու համայնքները մեծապես հետաքրքրված են կլաստերների զարգացման մեջ: Դրանք ոչ միայն նոր աշխատատեղերի, տնտեսությունների և կյանքի որակի բարձրացման խթանիչներ են, այլև համայնքների բրենդավորման ուղիներ են հանդիսանում:

Բացի այդ կլաստերի շուրջ ակտիվորեն սկսում են ձևավորվել հարակից արտադրությունները, տնտեսությունները, զարգանում են ենթակառուցվածքները՝ ճանապարհատրանսպորտային կապեր, հաղորդակցության ուղիներ, հանրային ծառայություններ՝ առևտուր, շինարարություն, մասնագիտական կրթություն: Որպես արդյունք ձևավորվում է տարածաշրջանի ուղղորդված մշակույթ, տնտեսություն, աճի բևեռ:

Տարածական պլանավորման հայեցակարգում կլաստերային մոդելը դիտարկվում և ներկայացվում է որպես համայնքների ներուժը և բոլոր հիմնախնդիրները ներառող, համաչափ և արդյունավետ զարգացման, կառավարման խելացի տեխնոլոգիա՝ հաշվի առնելով թույլ յուրացված տարածքների զարգացման հեռանկարային ռեսուրսները: Ուսումնասիրելով կլաստերային տարածական պլանավորման մոդելի հիմքում ընկած ներկլաստերային արդյունավետ կապերի ստեղծման և ռեսուրսների համաչափ տարաբաշխման առաջնահերթությունները՝ առաջադրվում է տարածական զարգացման կլաստերային համակարգի գործառույթի հենքի վրա մշակվող տարածաշրջանային կառավարման մոդել:

Մոդելի ձևավորման հիմնական սկզբունքներ են.

- գլխավոր միջուկի (միջուկների) ընտրություն՝ հիմնվելով ռեսուրսների համալիր վերլուծության վրա,
- երկրորդական (բաղադրիչ) միջուկների ընտրություն՝ հիմնվելով ներմիջուկային փոխգործունեության գնահատման վրա,
- ներմիջուկային կապերի ապահովում՝ հիմնվելով օպտիմալ կապուղիների բացահայտման վերլուծությունների վրա:

Երկրաստերային միջուկների դերաբաշխումը համակարգային գործարկման մեջ կախված ռեսուրսային ապահովությունից կարող է առանձնացվել ըստ հետևյալ հատկանիշների.

- *առաջատար միջուկի առկայություն*, որը կարող է ստանձնել գլխավոր համակարգողի դերակատարումը ներքին և արտաքին տնտեսական հարաբերություններում,
- *կլաստերի մրցունակ ենթակենտրոնների դուրս բերում*, արտաքին և ներքին շուկաներում առաջնային դիրքերում մնալու և մրցունակ արտադրանք ներկայացնելու նպատակով,
- *ենթակենտրոնների միավորում*, ռեսուրսների համադրման, համաձայնեցման միջոցով արտադրական ծախսերի նվազեցման և արդյունավետության բարձրացման համար:

Ճարտարապետաքաղաքաշինական պլանավորման գործընթացում կլաստերի սահմանաչափերը տատանվում են որպես առանձին միավոր դիտարկվող համայնքից մինչև պետության (պետությունների) սահմաններ: Կլաստերային տնտեսության կազմավորման փուլից մինչև արդյունք տանող ընթացքը պայմանավորված է «մասշտաբի էֆեկտով», երբ մի քանի խոշոր տնտեսվարող սուբյեկտներ ստեղծում են միօրինակ բաղադրիչների տարածքային կենտրոնացված պահանջարկ, համապատասխան որակավորման աշխատուժի, որոշակի ուղղվածության գործառույթների և ծառայությունների նկատմամբ, որոնք նույնպես ձգտում են տարածքային առումով համախմբվել և տեղայնացվել կլաստերների շուրջ:

Առաջնահերթ դիտարկվում են կլաստերի ձևավորման հնարավորությունները:

Իրենց բնույթով կլաստերները կարող են ձևավորվել.

- առկա ռեսուրսների,
- ներդրված, բարելավված ռեսուրսների,
- դիտարկվող հեռանկարային զարգացման պոտենցիալ ունեցող արհեստաձին ռեսուրսների հիման վրա:

Որպես քաղաքաշինական ակտիվ զարգացող մոդել, ընդգծվում է կլաստերացանցային համակարգի հնարավոր դերի և նշանակության հարցը կայուն տնտեսության զարգացման գործում: Կայուն զարգացման մոդելի համատեքստում կլաստերը դիտարկվում է որպես քաղաքային համակարգի

կետային, գծային և տարածական բաղադրիչների համախմբման և համագործարկման գործիք:

Միջազգային պրակտիկ նախագծման և տեսաբանական մեթոդների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս սահմանել կլաստերի ձևավորման հիմնական սկզբունքային և փուլային մոտեցումները:

- Առաջին փուլ: Նախնական վերլուծության, ռեսուրսների գնահատման, կլաստերի տեղայնացման հնարավորությունների դիտարկման և սպասվող զարգացումների հայեցակարգային ուղիների մշակման ժամանակահատված:
- Երկրորդ փուլ: Կլաստերի հիմնական գործարկման, համակարգի պոտենցիալ մասնակիցների ներգրավման ժամանակահատված: Այս փուլում իշխանությունների գործողություններն ուղղվում են կլաստերահեն նախագծերի գործարկման հիմքում տնտեսական զարգացման հեռանկարային կենտրոնների ձևավորմանը, համակարգի անխափան զարգացման ապահովմանը:

## **ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳՄԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄՈՂԵԼԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Երկրորդ գլխում ուսումնասիրվել է կլաստերացանցային մոդելի կիրառությունը ՀՀ-ում՝ առաջնահերթ դիտարկելով զարգացման մոդելի հնարավոր տեղայնացման ճարտարապետահատակագծային հիմնախնդիրները:

Հետազոտվել են ՀՀ տարածքների համար մշակված քաղաքաշինական հայեցակարգերն ու իրականացված նախագծերը, որոնք ուղղված են մարզերի, համայնքների, քաղաքների և առանձին տարածքների ռեսուրսների ուսումնասիրմանն ու դրանց հիմքում համաչափ և կայուն զարգացմանը:

Կլաստերային մոդելը որպես համայնքների ներուժը և բոլոր հիմնախնդիրները ներառող, համաչափ և արդյունավետ զարգացման, կառավարման համակարգ դիտարկվում է որպես հանրապետության թույլ յուրացված տարածքների զարգացման գործիքակազմ: Որպես ՀՀ քաղաքաշինության ոլորտում ներդրվող նոր մեթոդ մոդելը փաստացի իր հիմքում կրում է երկրում արդեն իսկ մշակված և գործարկված տարածական պլանավորման հայեցակարգերի մի շարք հիմնադրույթներ:

Տարաբնակեցման գլխավոր հարակազիծ: Որպես կլաստերային մոդելի կիրառման փորձի համեմատական վերլուծություն քննարկվել է ՀՀ տարածքի համար մշակված տարաբնակեցման գլխավոր նախագիծը: Ինչպես և տարաբնակեցման գլխավոր հատակագծի, այնպես էլ կլաստերային մոդելավորման մշակման առանցքում համայնքների քաղաքաշինական համաչափ զարգացումն է, հստակ և հեռանկարային կլաստերային գլխավոր և երկրորդական կենտրոնների (միջուկների), և դրանց ազդեցության գոտում

գտնվող և կլաստերի բաղադրիչ հանդիսացող բնակավայրերի ընտրությունը, դրանց միջև ուղիղ և հակադարձ փոխազդեցությունների դիտարկումն ու զարգացման ուղղության դուրս բերումը: Դիտարկելով կլաստերային մոտեցումը որպես տարաբնակեցման ավելի ճկուն և արդիականացված տարբերակ՝ հնարավոր է դառնում հիերարխիական հաջորդ մակարդակներում՝ գլոբալ, հանրապետական և լոկալ քաղաքաշինական զարգացման փաստաթղթերի մշակման հիմքում դնել կլաստերային մոդելի տեղայնացումն ու հնարավոր զարգացման ուղղությունների դիտարկումը:

Համայնքների խոշորացման ծրագիր: Որպես բնակավայրերի համախմբման, ռեսուրսների կենտրոնացման նախատիպային պլանավորման ծրագիր դիտարկվել է նաև համայնքների խոշորացման նախագիծը՝ որպես տարաբնակեցման համակարգի համաչափ զարգացման հայեցակարգ և ՀՀ-ում կլաստերային հատակագծային միավորների ձևավորման փորձ: Խոշորացման ծրագրի և կլաստերային պլանավորման հիմքում բնակավայրերի ռեսուրսների կենտրոնացման և արդյունավետ կառավարման հայեցակարգային մոտեցումն է: Ինչպես և կլաստերային գլխավոր կենտրոնների ընտրության դեպքում, այնպես էլ խոշորացվող համայնքների համայնքային կենտրոնի ընտրության մեջ առանցքային է դիտարկվում ռեսուրսահեն գործոնի դուրս բերումը, դրա շուրջ տնտեսությունների ձևավորումը և գործընթացում հարակից բնակավայրերի ներգրավումը՝ որպես ապակենտրոնացման խորացմանն ուղղված ռազմավարական ծրագիր:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթեր: Միկրոռեգիոնի ձևավորման սկզբունքին համանման, կլաստերների ռեսուրսահեն կենտրոնների կազմակերպումն իրականացվում է հիմնվելով համակարգում դրանց ունեցած դերից ու նշանակությունից, քաղաքաշինական իրադրության առանձնահատկություններից, պատմական, մշակութային, ենթակառուցվածքային և սոցիալ-տնտեսական ընդհանրություններից, համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայությունից:

Աճի բևեռներ: Հետազոտվել է նաև «աճի բևեռներ» հայեցակարգը որպես համայնքների կլաստերային զարգացման գլխավոր և երկրորդական կենտրոնների բացահայտման գործիքակազմ: Ընդհանրացնելով աճի բևեռների հայեցակարգային մոտեցումներն ու կլաստերային մոդելի ձևակազմման և զարգացման ընթացքը՝ ընդգծվել են քաղաքաշինական միջավայրերի զարգացմանն ուղղված քայլերի համադրելիությունը: Աճի բևեռներ և կլաստերային կենտրոններ հայեցակարգերը համարժեքորեն կարևորվում են ռեգիոնալ տնտեսական քաղաքականության, ապա՝ ազգային տնտեսության համալիր ու գիտական ուսումնասիրության, տնտեսության գործառության ռազմավարային հիմնավորված կազմակերպման ապահովումը:

Կլաստերային համակարգը՝ որպես նորարարական մոտեցումների ներառմամբ և միջավայրի փոփոխություններին ճկուն արձագանքող

քաղաքաշինական մոդել, դիտարկվում է որպես ՀՀ տարածքի, նրա վարչատարածքային միավորների և դրանց բաղկացուցիչ մասերի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագիր, տարածքների կայուն զարգացման և դրանց նպատակային օգտագործման փոխներգործող ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների կազմակերպման, կանխատեսման, ծրագրման և նախագծման գործիքակազմ:

Որպես կլաստերային մոդելի տեղայնացման տարածաշրջան ուսումնասիրվել է Սյունիքի մարզը՝ համայնքների զարգացման պատմական ուղին, առկա սոցիալ-տնտեսական պայմանները և մարզի համայնքների ճարտարապետահատակագծային կառուցվածքի առանձնահատկությունները: Հետազոտվել են մոդելի չափորոշիչների տեղայնացումն ու կիրառման հնարավորությունները Սյունիքի մարզի համայնքներում:

Տարածաշրջանի բնակավայրերի առկա խնդիրների բացահայտման և դրանց համալիր լուծման համար անհրաժեշտ է դիտարկել առավել կենսունակ և միասնական (կլաստերային) համակարգ ունենալու գաղափարը՝ համայնքի քաղաքաշինական բոլոր միավորների համաչափ և փոխկապակցված զարգացումն ապահովելու համար: Տվյալ գործընթացում կիրառելի են ինչպես գիտատար (ոչ ռեսուրսահեն) ճյուղերի զարգացման համար պայմանների ստեղծումը, այնպես էլ գործող կամ կորսված, բայց դեռևս արդիական ոչ արդյունաբերական ոլորտների վերածնունդի համար խթանների կիրառումը:

Ուսումնասիրվել են ՀՀ Սյունիքի մարզի համայնքների առկա ռեսուրսները և դրանց գնահատման հիման վրա զարգացման հեռանկարային հնարավորությունները՝ զարգացման հիմքում դնելով համայնքների համագործակցությունը, ուղիղ և հակադարձ փոխազդեցությունը:

Ուսումնասիրվել են համայնքների խոշորացման (կլաստերացման) սկզբունքները և չափորոշիչները, որոնք լուրջ նախապայման են խոշորացման միավորի (փնջի կամ սխեմայի) ձևավորման ժամանակ սուբյեկտիվ մոտեցումներից խուսափելու և խոշորացման գործընթացը առավել կառավարելի կազմակերպելու համար: Որպես համայնքների խոշորացման կարևոր սկզբունքներ, հայեցակարգում ներառված են՝ տնտեսական նպատակահարմարությունը, բնակչությանը ծառայություններ մատուցելու հնարավորության ապահովումը, բնակչության համար հանրային ծառայություններից օգտվելու հասանելիությունը, ՏԻՄ-երի ինքնուրույնության ապահովումը և այլն: Որպես խոշորացման չափորոշիչներ, ուսումնասիրվել են հայեցակարգում ներառված այն հիմնական պայմաններն ու ցուցանիշները, որոնց պետք է բավարարեն համայնքները՝ կոնկրետ փնջում ընդգրկվելու համար:

Որպես եզրահանգում առաջարկվել է ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում կլաստերային մոդելի տեղայնացման մեթոդաբանությունը, ներկայացվել են

հայեցակարգի իրականացման ակնկալվող արդյունքներն ու հայեցակարգի ոչ արդյունավետ իրականացման ռիսկերի կանխմանն ուղղված միջոցների համակարգը:

**ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

**Երրորդ գլխում** մշակվել է կլաստերային մոդելի ՀՀ Սյունիքի համայնքներում տեղայնացման առանցքային դրույթների հայեցակարգը:

Հետազոտվել է մոդելի հեռանկարային զարգացումը նորաստեղծ համայնքների՝ որպես նոր կազմավորված քաղաքաշինական միավորների ճարտարապետաքաղաքաշինական պլանավորման գործընթացում:

Սյունիքի մարզում կլաստերային մոդելի տեղայնացման համար անհրաժեշտ պայման է հանդիսացել գործող քաղաքաշինական ծրագրերի ուսումնասիրությունը և հեռանկարային զարգացման հնարավորությունների բացահայտման համար նոր պոտենցիալների դիտարկումն ու դուրս բերումը:

Հաշվի առնելով մարզի առկա քաղաքաշինական կառուցվածքը, բազմաոլորտ զարգացվածությունը և բազմամասնագիտական տնտեսությունների մեծապես արդյունավետ գործարկումը, հնարավոր է դիտարկել քննարկվող կլաստերային մոդելը տնտեսության մի շարք ոլորտներում տեղայնացնելու խնդիրը:

*Կլաստերային մոդելի տեղայնացմամբ Սյունիքի համայնքների կառուցվածքահարակազմային կառուցվածքներում հնարավոր է ձևավորել.*

- բնակելի կլաստեր,
- զբոսաշրջային կլաստեր,
- արդյունաբերական կլաստեր,
- հանրային բազմամակարդակ սպասարկման և սոցիալական կլաստեր,
- ուսումնակրթական կլաստեր,

այդ թվում նաև գյուղատնտեսական կլաստեր, պատմամշակութային կլաստեր, էկոլոգիական կլաստեր, ՏՏ կլաստեր և այլն:

Մարզում արդեն իսկ իրականացված համայնքների խոշորացման ծրագրի արդյունքում փաստացի ձևավորված միկրոռեգիոնները քաղաքաշինական կլաստերային ցանցի կազմակերպման հնարավորություն են տալիս:

Հետազոտության հիմքում դրվել է կլաստերային տնտեսության զարգացման գերակա ուղղությունների դուրս բերումն ու տնտեսության համապատասխան ոլորտների զարգացման հեռանկարների ձևավորումը:

Ըստ նոր ձևավորված համայնքների համախմբերի ռեսուրսների բաշխվածության դիտարկվել է առկա և հեռանկարային զարգացման պոտենցիալ ունեցող թիրախային ոլորտների դուրս բերումը և կլաստերացման



շրջանակում դրանց մեխանիզմների գործարկումը: Դիտարկվել են կլաստերային մոդելի կառուցվածքի ձևատեղծման հնարավոր ոլորտները: Յուրաքանչյուր կլաստերահեն ոլորտի արդյունավետ գործարկման համար համայնքները դիտարկվել և բաշխվել են որպես կլաստերի գլխավոր և երկրորդական սպասարկող կենտրոններ:

Կլաստերային մոդելի տեղայնացումը դիտարկվել է որպես տարածաշրջանի զարգացման ռազմավարական ծրագիր և առաջադրվել են հետևյալ նպատակները.

- 1) տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով Սյունիքի մարզում տնտեսական աճի ապահովում,
- 2) Սյունիքի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում,
- 3) մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանված 3 նպատակներին հասնելու համար նախանշվել են հիմնական գերակա 2 ուղղություններ.

1.Արդյունաբերության աճը - արդյունաբերական կլաստերի ձևավորում՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա, այն է՝ մշակող արդյունաբերության զարգացում և արտահանման ավելացում:

2.Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում, գյուղատնտեսական կլաստերի ձևավորում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ մարզի գյուղատնտեսության ոլորտի արդիականացում:

Որպես արդյունք երրորդ գլխում առաջարկվել է տեղայնացնել կլաստերային մոդելը՝ ուղղորդված ոլորտներում ակնկալելով հետևյալ արդյունքները.

- 1) մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- 2) բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- 3) արդյունաբերության զարգացում,
- 4) գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և շուկայական մրցունակության (ապարանքայնության) մակարդակի բարձրացում,
- 5) մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- 6) բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- 7) մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- 8) կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- 9) տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում,

10) քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Մարզի համայնքներից յուրաքանչյուրն անկախ առկա ռեսուրսների, աշխարհագրական տեղաբաշխման, բնակլիմայական պայմանների և ենթակառուցվածքների արդի պայմանների դիտարկվել է որպես առաջարկվող ձևավորվող համակարգի հիմնական կամ սպասարկող կլաստերային հանգույց: Յուրաքանչյուր բաղադրիչի՝ առանձին համայնքի կամ քննարկվող ոլորտի վերլուծության արդյունքում դուրս են բերվել ոլորտային բացթողումներն ու տնտեսվարման հնարավոր թերացումները, քննարկվել են այլընտրանքային զարգացման ուղիներ և առաջարկվել են համակարգված լուծումներ:

Կլաստերային մոդելի ճարտարապետատարածական կառուցվածքի ձևավորման և կատարելագործման գործընթացում կարևորվել է մոդելի մարզային համակարգերի և հատկազգային առաջնային կենտրոնների (մարզկենտրոններ, խոշորագույն քաղաքներ, ռեսուրսահեն հանգույցներ և այլն) զարգացվածության փոխներգործության հավասարակշռության խնդիրները: Մոդելի կառավարման համար սահմանվել է ռեսուրսների գնահատման չափորոշիչներ, համակարգելով բոլոր ցուցանիշներն ընդհանուր կառավարման պլանի համակարգով: Այդ նպատակով հաշվարկվել և գնահատվել են կլաստերային կենտրոնների ռեսուրսները և ներուժը (առկա, հեռանկարային):

Ոլորտային տեղայնացմամբ դուրս բերված ընդհանրական արդյունքների հիման վրա՝ Սյունիքի Գորիս համայնքի բնակավայրերի օրինակով, մշակվել է տարածական հատկազգային մոդել: Դուրս են բերվել մոդելի կազմավորման և գործարկման դրական արձագանքների ազդեցության գոտիներն ու հեռանկարային զարգացման ուղիները:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Քաղաքաշինական պլանավորման մեջ կլաստերացանցային մոտեցումը վերլուծվել է որպես ինքնաբավ ու ինքնավար ճարտարապետատարածական միավորի ձևավորման գործիքակազմ, որն իր համակարգի ներսում հնարավորություն ունի բոլոր սպառողներին ապահովել անհրաժեշտ գործառույթներով (բնակություն, աշխատանք, հանգիստ, բիզնես, առևտուր, զվարճանք, և այլն):
2. Հետազոտությամբ կլաստերային համակարգը բացահայտվում է որպես նորարարական մոտեցումների ներառմամբ և միջավայրի փոփոխություններին ճկուն արձագանքող քաղաքաշինական մոդել, որը պետք է դիտարկվի որպես ՀՀ տարածքի, նրա վարչատարածքային միավորների և դրանց բաղկացուցիչ մասերի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագիր, տարածքների կայուն զարգացման և դրանց

նպատակային օգտագործման փոխներգործող ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների կազմակերպման, կանխատեսման, ծրագրման և նախագծման գործիքակազմ:

3. ՀՀ-ում իրականացված տարածական պլանավորման հայեցակարգերի և նախագծային փաստաթղթերի վերլուծությամբ հիմնավորվել է առաջարկվող կլաստերային համակարգի ներդրման արդյունավետությունը՝ որպես տարածքների գործառնական կազմակերպման և ճարտարապետատարածական վերակազմավորման նոր կառուցվածքային սխեմա:
4. ՀՀ Սյունիքի մարզի տարբեր ուղղվածության կլաստերացման հեռանկարային կտրվածքում վերլուծվել և առանձնացվել են համայնքների (բնակավայրերի) տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունները և կատարվել է հնարավոր տեղային կենտրոնների և զարգացման աճի բևեռի ընտրություն:
5. Հաստատվել է, որ կլաստերային պլանավորման հիմքում դրված է Սյունիքի տարածքային զարգացման հիմնական ուղղությունների՝ քաղաքաշինական-տնտեսական զարգացման և ներդրումների համար առավել նպաստավոր ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների և ճարտարապետահատակագծային բանվածքի հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի և կենսամիջավայրի բարելավմանը:
6. Սյունիքում բազմաշերտ ու տարաոլորտ ճարտարապետատարածական կլաստերային կառուցվածքի ձևավորման և կատարելագործման գործընթացում կարևորվել է մոդելի տարածաշրջանային համակարգերի և համայնքներում հատակագծային առաջնային կենտրոնների (մարզկենտրոններ, խոշորագույն քաղաքներ, ռեսուրսահեն հանգույցներ և այլն) ընտրությունը և դրանց փաստացի ու հեռանկարային փոխներգործության արդյունավետության գնահատումը: Մոդելի մշտադիտարկման և կառավարման համար սահմանվել և դասակարգել են ռեսուրսների գնահատման չափորոշիչներ:
7. Սյունիքի համայնքներում կլաստերացման ներուժի գնահատման և տեղայնացման հեռանկարների առաջարկներում մշակվել են հանձնարարականներ ծավալահատակագծային արդյունավետ՝ տվյալ բաղադրիչում կենտրոնացած գործառույթներին համապատասխան կառուցվածքի ձևավորման, անհրաժեշտ ենթակառուցվածքներով հագեցած, բնակչության համար հարմարավետ, անվտանգ ու ապահով և գեղագիտական առումով գրավիչ կենսագործունեության միջավայրի

ձևավորման և արդյունավետ գործառնության կազմակերպման համար՝ ստեղծելով նախադրյալներ նաև ՀՀ տարաբնակեցման համակարգի և ընդհանուր տարածքային արդյունավետ կազմակերպման խնդիրների լուծման համար:

8. Հիերարխիական յուրաքանչյուր մակարդակի նախանշումներում ակնկալվող արդյունքում գրանցված ոլորտային զարգացումների և դրա հետ փոխկապակցված ենթակառուցվածքների և գործառնական հատակագծային կապերի տարաբաշխումը ստեղծում է զարգացման կայունություն և համաչափություն՝ կլաստերի խոշոր և փոքր համայնքներում: Ապահովում է ներքին և արտաքին մրցակցային տնտեսություն, որպես կլաստերային տնտեսության հեռանկարային զարգացում դիտարկելով նաև ազդեցության տարածումը հարակից բնակավայրերի, համայնքների, ձևավորվող այլ կլաստերների և այլ տնտեսությունների վրա:
9. Մարզում կլաստերային մոդելի գործարկման արդյունավետության գնահատման և հստակ հեռանկարների դուրս բերման նպատակով մարզի Գորիս խոշորացված համայնքի բնակավայրերում կլաստերային մոդելի տեղայնացման օրինակով հիմնավորվել է ոլորտային կլաստերացման առավելություններն ու գործարկման արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Օրինակելի մոդելի մշակումը հնարավորություն է ընձեռել ընդգծել կլաստերի տարածական հատակագծային կառուցվածքի ձևավորման հստակ հանձնարարականներ, ճարտարապետահատակագծային առաջարկներ և ընդհանուր կառավարման պլան՝ Սյունիքի մարզի համաչափ զարգացման համար, ապահովելով սոցիալ-տնտեսական, բնապահպանական և քաղաքաշինական բաղադրիչների համազոր ներառվածությունը:

### **Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ գիտական աշխատանքներում**

1. Բաբայան Լ.Ս., Կլաստերային համակարգը որպես մարզերի կամ համայնքների (բնակավայրերի) զարգացման մոդել, ՃՇՀԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Հ. I (68), Երևան, 2018, էջ 3-12
2. Պետրոսյան Ն.Գ., Բաբայան Լ.Ս., Գյուլիսանջյան Ա.Խ., ՀՀ Տավուշի տարածաշրջանի Բերդ քաղաքում հանրային կլաստերի ձևավորում, ՃՇՀԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Հ. II (69) 2018, էջ 93-104
3. Babayan L.S., Harutyunyan E., Architectural Problems of Touristic Clusters Organization in Republic of Armenia, Proceedings of the 10th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, 2018, pp. 71-75
4. Petrosyan N.G., Babayan L.S., Afshar B.R., Architectural-Planning problems of Goris city historic landscape identity preservation, Proceedings of the 10th

- International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, 2018, pp. 160-163
5. Babayan L.S., ETFE PLASTIC APPLICATION FOR RECONSTRUCTION AND PRESERVATION OF ARCHITECTURAL STRUCTURES IN SYUNIK PROVINCE, RA, Key Engineering Materials Submitted: 2019-07-11 ISSN: 1662-9795, Vol. 828, pp 63-67 Accepted: 2019-07-25 © 2020 Trans Tech Publications Ltd, Switzerland Online: 2019-12-20 (SCOPUS)
  6. Բաբայան Լ.Ս., Զրոսաշրջային կլաստերի կազմակերպման ճարտարապետահատակագծային խնդիրները ՀՀ Սյունիքի մարզում, «Զրոսաշրջությունը 21-րդ դարի ֆենոմեն» միջբուհական գիտաժողովի նյութեր, Երևան, 2019, էջ 28-35
  7. Babayan L.S., Architectural-planning features of Hrazdan city's industrial territories adaptation as a core of military industrial cluster, “Потенциал интеллектуально одарённой молодежи – развитию науки и образования”, Материалы VIII Международного научного форума молодых ученых, инноваторов, студентов и школьников 23–25 апреля, Астрахань, 2019 г., Т. 1, с. 274-278
  8. Babayan L.S., “Residential cluster redevelopment of post-soviet mass housing neighborhoods in Armenia”, FACING POST-SOCIALIST URBAN HERITAGE Proceedings of the 3rd international doctoral–post doctoral conference organized by the Department of Urban Planning and Design, Faculty of Architecture, Budapest University of Technology and Economics (BME) DOCONF2019, 26-29 pp.
  9. Babayan L.S., Architectural - planning features of the cluster reuse of the territories in Syunik province after mine site reclamation, Contemporary problems of Architecture and Construction, Proceedings of the 11th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, 2019, pp. 39-45
  10. Petrosyan N., Babayan L., Institutional issues of the preservation of the identity of the urban heritage in the process of sustainable development of the environment (7, Makich, Goris), Contemporary problems of Architecture and Construction, Proceedings of the 11th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, 2019, pp. 128-132
  11. Babayan L., Monnot Der-Mesropian S., Features of construction cluster placement in Syunik province of RA (example of Meghri region), Construction Technologies and Architecture, Volume 2, pp 79-85, ISSN print: 2674-1229, ISSN web: 2674-1237, © 2022 Trans Tech Publications Ltd, Switzerland
  12. Babayan L., Giamb Bruno M., Reuse of the historical environment as a public cluster core (with Gyumri city example), Selected, peer reviewed papers from

the 13th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, 6-8 October 2021, Yerevan, Republic of Armenia, pp 24-29

13. Բաբայան Լ.Ս., ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում ռազմասարդյունաբերական կլաստերային համալիրի կազմակերպման ճարտարապետաքաղաքաշինական խնդիրները, Անվտանգության արդի հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր, 26 մարտի, Երևան, 2021 թ., էջ 195-199

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ И АРХИТЕКТУРНО-ПРОСТРАНСТВЕННОЙ  
ОРГАНИЗАЦИИ КЛАСТЕРНОЙ МОДЕЛИ В СООБЩЕСТВАХ СЮНИКА

РЕЗЮМЕ

В градостроительном планировании кластерный подход был проанализирован как инструмент формирования самодостаточной и автономной архитектурно-пространственной единицы, которая внутри своей системы имеет возможность обеспечить всех потребителей необходимыми функциями (проживание, работа, отдых, бизнес, торговля, развлечения, и т. д.):

В исследовании кластерная система раскрывается как градостроительная модель с включением инновационных подходов и гибко реагирующая на изменения среды, которая должна рассматриваться как комплексная программа социально-экономического развития территории Республики Армения, ее административно-территориальных единиц и их составных частей, инструментарий устойчивого развития территорий и взаимодополняющих направлений и приоритетов их целевого использования, распределения производственных мощностей, организации, прогнозирования, планирования и проектирования инженерно-транспортных и других инфраструктур.

Анализ реализованных в РА концепций пространственного планирования и проектной документации обосновал эффективность внедрения предлагаемой кластерной системы как новой структурной схемы оперативной организации территорий и архитектурно-пространственной перестройки.

В перспективе кластеризации различной направленности Сюникской области РА были проанализированы и выделены особенности территориального размещения общин (населенных пунктов) и сделан выбор возможных локальных центров и полюса роста развития.

В процессе формирования и совершенствования многослойной и многосферной архитектурно-пространственной кластерной структуры в Сюнике была отмечена важность выбора региональных систем модели и приоритетных плановых центров в общинах (областные центры, крупнейшие города, ресурсные центры и др.) и оценки эффективности их фактического и перспективного взаимодействия. Для мониторинга и управления моделью установлены и классифицированы критерии оценки ресурсов.

В предложениях по оценке потенциала кластеризации и перспективам локализации в общинах Сюника были разработаны рекомендации для формирования эффективной структуры, соответствующей сфокусированным в данном компоненте функциям, формирования насыщенной необходимой инфраструктурой, комфортной для населения, безопасной и эстетически привлекательной среды жизнедеятельности и организации эффективного функционирования, создавая предпосылки также для решения проблем системы расселения РА и общей территориальной эффективной организации.

Распределение зафиксированных на общем уровне иерархии отраслевых развитий и связанных с ними инфраструктур и планировочно-функциональных связей, создает стабильность и симметрию развития в больших и малых сообществах кластеров. Обеспечивает внутреннюю и внешнюю конкурентную экономику, в качестве перспективного развития кластерной экономики рассматривая также распространение влияния на прилегающие населенные пункты, общины, другие формирующиеся кластеры и другие экономики.

С целью оценки эффективности запуска кластерной модели и вывода четких перспектив в области, на примере локализации кластерной модели в населенных пунктах укрупненной общины Горис области обсуждались преимущества отраслевой кластеризации и возможности повышения эффективности запуска. Разработка образцовой модели дала возможность принять четкие рекомендации по формированию пространственной планировочной структуры кластера, архитектурно-планировочные предложения и общий план управления для соразмерного развития Сюникской области, обеспечив равномерное включение социально - экономических, экологических и градостроительных компонентов.



**FEATURES OF APPLICATION AND ARCHITECTURAL-SPATIAL  
ORGANIZATION OF THE CLUSTER MODEL IN SYUNIK COMMUNITIES**

**SUMMARY**

In urban planning, the cluster approach was analyzed as a tool for the formation of a self-sufficient and autonomous architectural and spatial unit, which within its system has the ability to provide all consumers with the necessary functions (accommodation, work, recreation, business, trade, entertainment, etc.):

In the study, the cluster system is revealed as an urban planning model with the inclusion of innovative approaches and a flexible response to environmental changes, which should be considered as a comprehensive program of socio-economic development of the territory of the Republic of Armenia, its administrative-territorial units and their constituent parts, tools for sustainable development of territories and complementary directions and priorities of their targeted use, distribution of production capacities, organization, forecasting, planning and design of engineering, transport and other infrastructures.

The analysis of spatial planning concepts and project documentation implemented in the Republic of Armenia proved the effectiveness of the implementation of the proposed cluster system as a new structural scheme for the operational organization of territories and architectural and spatial restructuring.

In the perspective context of clustering of various directions of the Syunik region of the Republic of Armenia, the features of the territorial location of communities (settlements) were analyzed and highlighted, and a choice of possible local centers and poles of development growth was made.

In the process of forming and improving the multilayer and multi-sphere architectural-spatial cluster structure in Syunik, the importance of choosing regional model systems and priority planning centers in communities (regional centers, major cities, resource centers, etc.) and evaluating the effectiveness of their actual and prospective interaction was noted. For monitoring and managing the model, criteria for evaluating resources have been established and classified.

In the proposals for the assessment of clustering potential and localization prospects in the communities of Syunik, recommendations were developed for the design of a structure that is effective in terms of size and layout, in accordance with the functions concentrated in the given component, equipped with the necessary infrastructures, comfortable, safe and secure for the population, and aesthetically attractive for the creation of a living environment and for the organization of efficient operation, creating prerequisites as well for solving the problems of RA resettlement system and general effective territorial organization.

At the overall hierarchical level, the distribution of expected sectoral developments and associated infrastructure and operational plan connections creates stability and symmetry of development in the large and small communities of the cluster. Ensures an internal and external competitive economy, considering as a prospective development of the cluster economy also the spread of influence on adjacent settlements, communities, other emerging clusters and other economies.

In order to evaluate the effectiveness of the cluster model in the region and to draw out clear perspectives, the advantages of sectoral clustering and the possibilities of increasing the effectiveness of the implementation were discussed on the example of the localization of the cluster model in the settlements of the enlarged Goris community of the region. The development of an exemplary model made it possible to draw up clear recommendations for the formation of the cluster's spatial plan structure and architectural layout proposals and a general management plan for the balanced development of the Syunik region, ensuring the effective inclusion of socio-economic, environmental and urban planning components.

A handwritten signature in black ink, appearing to be a stylized name, possibly 'L. Arakelyan', written in a cursive script.